Կարնո շրջանից՝ Բարձր Հայքից[6]։ Այդ տարբերությունը ավելի է մոտենում հին գերեզմաններից հանած գանգերի, ինչպես և հնագույն տեղացի ժողովուրդների գանգերի չափերին։ Դա հատկանշական է առավել, որ համընկնում է բարբառային և կենցաղային տարբերությունների հետ։

Թեև, պրոֆ. Բունակն այս տարբերությունը առաջացած է համարում տեղում կատարված դիֆերենցիացիայից, ես՝ նկատի ունենալով այս տարբերության համատարած լինելն ընդարձակ տերիտորիայի վրա, որտեղ ֆիզիկա-աշխարհագրական պայմանները խիստ հակադիր ձևերով են զուգորդված, հակված եմ ավելի ընդունելի ճանաչել այն եզրակացությունը, որով այս տարբերությունը պիտի բացատրել ոչ թե ֆիզիկա-աշխարհագրական պայմաններով, այլ մի ուրիշ ինչ-որ էթնիկ տարրի հետ միախառնվելով՝ մի տարրի, որը եղել է և ավելի լայնագլուխ, և ավելի մազոտ։ Արդյո՞ք այդ պրոցեսը կատարվել է տակավին հնդեվրոպական ժողովուրդների ներխուժումից առաջ, թե հետո, նրանց երևալու հետ շաղկապված։ Այս հարցին հաստատապես պատասխանելու համար անհրաժեշտ է ունենալ շատ ավելի մեծաքանակ և ճշտված մարդաբանական տվյալներ, որոնց հավաքման համար պահանջվում են սիստեմատիկ վարած չափումներ։ Սակայն, երևելով այն հանգամանքից, որ այդ մարդաբանական տարբեր տիպի տարածման շրջանը՝ արեալը ունի և իր առանձնահատուկ բարբառային ու կենցաղային տարբերությունները և որ այդ տարբերությունները պետք է բացատրել, բացի այլ ազդակների ներգործությունից նաև նրանց կազմավորման մեջ հնդեվրոպական տարրի ունեցած մասնակցությամբ, առայժմ ինձ հավանական է թվում այն ենթադրությունը, որ նաև վանյան (ըստ պրոֆ. Բունակի, ուրեմն և ղարաբաղյան) մարդաբանական տիպի կազմավորման մեջ հնդեվրոպական շերտն է, որ առանձնապես մասնակցել է։ Պրոֆ. Բունակը թերագնահատում է[7], նույնիսկ բոլորովին անգիտանում է հնդեվրոպական մարդաբանական տարրի այս մասնակցության նշանակությունն առհասարակ Հայկական լեռնաշխարհի հայ բնակչության ֆիզիկական առանձնահատկությունների ձևավորման պրոցեսում։

Ապա ո՞վքեր են եղել Զանգեզուրի նախնական բնակիչները։

Եվրասիայի ժողովրդական ո՞ր խմբին է պատկանել այստեղի նախահնդեվրոպական էթնիկ շերտը։

Չէ՞ որ այդ շերտի ներկայացուցիչները թողել են մեգալիթյան բերդեր, օրինակ՝ Ուզում, բազմաթիվ դոլմեններ՝ Յայջիյում և այլ վայրերում. օրինակ՝ Դարահող լեռնաշղթայի վրա՝ երկհարկ, ապա ղոշուն-դաշ[8] ընդարձակ քաղաքատեղում՝ Սիսավանի (Սիսիան) շրջկենտրոնի մոտ և այլ հուշարձաններ, որոնց կառուցումը վերագրվում է հսկաներին— Սաղսաղանի լեռան Հրուշանին, Շնհերցի Բոլին[9]։

Այդ էթնիկ շերտից մնացել են բրոնզե և երկաթե իրեր, կավե սամաններ[10]։

---

[6] Այժմյան Էրզրումի և Երզինջանի վիլայեթները։

[7] Crania armenica, էջ 211։

[8] Առաջացել է հայերեն երիտասաց դաշտ ձևից, որից Ղոշուն-դաշտ, ապա՝ Ղոշուն-դաշ՝ «Ջորքերի քարեր» (Ծան. խմբ.)։

[9] Լալայեան Ե., Զանգեզուր, էջ 16—17։

[10] Ռեալերը այդտեղ կատարել է պեղումներ և փորփրել է բազմաթիվ դամբարաններ։ Նյութերն անմշակ մնում են Լենինգրադի և Մոսկվայի թանգարաններում։ Մեր գիտարշավների ձեռք բերած պատմական հնագիտական զույքերը հանձնված են Երևանի պետ. պատմական թանգարանին։